

ՏԻՐԱՆ ՍԵՐՈՒՅԱՆ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվրոպական համայնքների արդարադատության դատարանն ստեղծվեց երեք հիմնական գործառույթների իրականացման նպատակով¹։

ա) կանխելու համայնքի կառույցների, առաջին հերթին՝ Նախարարների խորհրդի և Հանձնաժողովի (Բարձրագույն ղեկավար մարմնի) լիազորությունների անցումը և այլ չարաշահումները։ Եվրոպական Միության հիմնադրմամբ Ղատարանի առաջնային գործառույթը դարձյալ մնաց դատական վերահսկողության իրականացումը Հանձնաժողովի և խորհրդի նկատմամբ։ Եվրոպական համայնքի մասին համաձայնագրի դատարանին նվիրված հոդվածների մեծ մասը նվիրված է այս գործառույթին, որի կարևորագույն դրսևորումն է հանդիսանում դատական պաշտպանության մատչելիությունը թե՛ ներպետական և թե՛ համայնական մակարդակով։

բ) լրացնելու համայնական իրավունքի բացերը և դրույթների անհստակությունը վեճերի քննության ընթացքում։ Չնայած իրավակիրառ պրակտիկայի ձևավորման գործառույթն առաջին հերթին իրականացնում են ներպետական գործադիր մարմինները, ինչպես նաև Եվրոպական հանձնաժողովը իր իրավասությանը վերապահված ոլորտներում, Եվրոպական դատարանը կարևոր դեր է խաղում համայնական իրավունքին նշված պրակտիկայի համապատասխանության որոշման տեսանկյունից և վեճերի առկայության պարագայում մեկնաբանություններ տալու առումով։

գ) անդամ-պետությունների կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ որոշումներ կայացնելու անդամ-պետությունների կողմից իրենց պայմանագրային պարտավորությունների (չ)կատարման վերաբերյալ։ Ընդ որում, խախտումների բացահայտման պարտականությունը Փարիզի Համաձայնագրով (Ձարածիխ և պողպատի եվրոպական համայնքի հիմնադրման մասին) դրված էր բացառապես Հանձնաժողովի վրա, իսկ հռոմի Համաձայնագրով նրան վերապահվեց առաջնային դեր նշված գործառույթի իրականացման առումով, որին պետք է օժանդակեր նաև Ղատարանը բայց միայն նախնական միջոցառումներն արդյունք չտալու դեպքում։

Նշված գործառույթները իրականացնելիս, սակայն, Ղատարանն ընթա-

¹ A. Robertson, "European Institutions - Cooperation, Integration, Unification", Frederick Praeger New York, 1966, էջ 150։

ցել է ուրույն զարգացման ուղով, մասնավորապես նախնական պարզաբանումների համակարգի միջոցով ձևափոխելով եվրոպական իրավունքը անհատական կարգով վիճարկելու մեխանիզմը ներպետական իրավունքի վիճարկման մեխանիզմի:

Նախ և առաջ անմիջական գործողության տեսության միջոցով ձևավորվեց ուղղակիորեն կատարման ենթակա (հարկադրելի) իրավունքների հասկացությունը, ապա գերակայության տեսությամբ ամրագրվեց ներպետական իրավունքի նկատմամբ համայնական իրավունքի գերակայությունն ապահովելու ներպետական դատարանի պարտականությունը: Բայց հարկ է նկատել, որ համայնական իրավունքի և ներպետական իրավունքի համապատասխանության որոշումը չի մտնում Դատարանի լիազորությունների մեջ, այն միայն կարող է պարզաբանել համայնական իրավունքի բովանդակությունը: Նախնական պարզաբանումներ տալիս Դատարանը նշել է, որ իրավասու է միայն բացատրելու թե ինչ է նշանակում այս կամ այն դրույթը, սակայն չսահմանափակվելով դրանով, որոշումներով նախատեսել է, թե որքանով որոշակի ձևակերպումները կամ դրույթները կհակասեն համայնական իրավունքին²:

Փաստորեն ձևափոխված համակարգը նվազեցրեց Դատարանի կախվածությունն անդամ-պետություններից հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝ յուրաքանչյուր անձի հայցով ներպետական դատարան դիմելու իրավունքը (որն ապա կարող էր հարցում ուղարկել եվրոպական դատարան), Համայնքների մասին համաձայնագրերի դրույթների անմիջական գործողության հետևանքով իմպլեմենտացիայի անհրաժեշտության վերացումը և Դատարանի վճիռների հարկադիր կատարման ենթակա դառնալը (հարկադրելիությունը)³:

Կարևորագույն հանգամանք է հանդիսանում այն, որ Դատարանի գործունեության առնչությամբ պետություններին ավելի շատ մտահոգում էր կոնկրետ գործերի էլքը, այսինքն՝ նյութական հետևանքները, քան ձևավորված սկզբունքների զարգացման և կիրառման երկարաժամկետ միտումները⁴: Դատարանն էլ, օգտվելով նման մոտեցումից, հետամուտ եղավ դատական նախադեպի ձևավորմանը՝ առանց քաղաքական լարվածություն առաջացնելու: Այն աստիճանաբար ընդարձակում էր իր իրավասության սահմանները՝ սահմանելով իրավական նոր սկզբունքներ, բայց չկիրառելով կոնկրետ գործի նկատմամբ: Օրինակ *Costa v ENEL* գործով Դատարանը, չնայած ամրագրեց համայ-

² F. Mancini, "The Making of A Constitution for Europe", *Common Market Law Review*, 1989, №26, էջ 606:

³ K. Alter, "The European Court's Political Power", *West European Politics*, №19, 1996, էջ 458:

⁴ P. Pierson, "The Path to European Integration: A Historical Institutional Perspective", *Comparative Political Studies*, №29, էջեր 135-136:

նական իրավունքի գերակայության սկզբունքը, բայց վճռեց, որ իտալական մասնավորեցման մասին օրենքը չէր հակասում համայնական իրավունքին:

Դատարանի նման վարքագիծը գրականության մեջ ևս դիտվում է որպես նպատակամղված գործունեության, մասնավորապես Հարթլիի հավաստմամբ. «... ընդունված մարտավարություն է հանդիսանում նոր տեսության առաջադրումն աստիճանաբար. առաջին գործով Դատարանն ընդհանուր սկզբունքի տեսքով ամրագրում է տեսությունը, բայց նշում է, որ այն կարող է ենթակա լինել տարբեր վերապահումների, նույնիսկ կարող է նշել, թե ինչու այն կիրառելի չէ տվյալ գործի հանգամանքների նկատմամբ: Այդուհանդերձ, սկզբունքն արդյունքում հաստատված է, իսկ առարկությունների դեպքում այն կարող է հետագայում վերահաստատվել, որից հետո կարելի է հրաժարվել բոլոր վերապահումներից և բացահայտել տեսությունն ամբողջությամբ»⁵:

Չնայած այս նախնական փուլում առանձին դժգոհությունների (այսպես, Ֆրանսիայի նախկին վարչապետ Մ. Դերբեի հավաստմամբ Շ. դե Գոլլն առաջարկել է վերանայել Եվրոպական դատարանի իրավասությունն ու լիազորությունները 1968թ.⁶) այդ ժամանակ, կարծում ենք, դժվար էր նախատեսել դատարանի նշված գործունեության հետևանքները, իսկ պետություններն ըստ էության ավելի շատ կարևորում էին վերահսկողությունն օրենսդրի նկատմամբ ոչ նպաստավոր օրենքների ընդունումը կանխելու նպատակով⁷:

Եվրոպական և ներպետական դատարանների համագործակցությունը արդարադատություն իրականացնելիս ավելի էր դժվարացնում քաղաքական ճնշումը դատարանի նկատմամբ կամ վերջինիս վճիռների կատարմանը դիմակայելը, քանի որ վեճն ըստ էության տեղափոխվում էր իրավական հարթություն, որտեղ գործում են երկխոսության այլ կանոններ⁸, որոնք պահանջում են իրավական և համոզիչ փաստարկների ներկայացում: Դրա վառ օրինակ է հանդիսանում 1966թ. Եվրոպական դատարանի վճիռը *Lütticke*⁹ գործով, ի պատասխան որի Գերմանիայի ֆինանսների նախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ Եվրոպական դատարանի վճիռն անվավեր ճանաչելու վերաբերյալ, քանի որ այն հակասում էր գերմանական դաշնային կառավարության հիմնավոր փաստարկներին և անդամ-պետությունների կարծիքին հանձնարարելով Գերմանիայի մաքսային ծառայողներին և հարկային դատա-

⁵ T. Hartley, "The Foundations of European Community Law", Clarendon Press: Oxford, 1988, էջ 78

⁶ H. Rasmussen, "On Law and Policy in the European Court of Justice", Martinus Nijhoff, Dordrecht Boston, Lancaster, 1986, էջ 351:

⁷ A. Moravcsik, "Liberal Intergovernmentalism and Integration: A Rejoinder", *Journal of Common Market Studies*, №33, 1995, էջեր 623-624:

⁸ J. Weiler, "A Quiet Revolution - The European Court of Justice and its interlocutors", *Comparative Political Studies*, №26, 1994, էջ 519:

⁹ Տես Գործ 57/65, 1966, ECR 257.

րաններին անտեսելու նշված վճիռը¹⁰: Չնայած դրան՝ հարկային դատարանները հրաժարվեցին կատարել վավեր դատական վճիռն անտեսելու հրահանգը, իսկ Բուլղեսթագում քննարկման առարկա դարձավ թե գերատեսչական նման հրահանգը որքանով է համատեղելի իրավական պետության (Rechtsstaat) գաղափարի հետ¹¹: Ուստի հարցի լուծման նպատակով նախարարությունը ներգրավեց իրավաբանների, որոնց պնդմամբ տվյալ գործի նկատմամբ կիրառելի է եղել Տնտեսական համայնքի մասին համաձայնագրի ոչ թե 95-րդ, այլ 97-րդ հոդվածը, իսկ վերջինս էլ չունի անմիջական գործողություն: Այս փաստարկն ընդունվեց Դատարանի կողմից, որով տվյալ գործի նյութական հետևանքները գերմանական կառավարության համար վերացան, բայց ամենակարևոր հետևանքը թերևս 95-րդ (ներկ. 90) հոդվածի անմիջական գործողության երկուստեք ճանաչումն էր (թեկուզև անուղղակիորեն):

Նկատելի է եղել նաև մասնավոր ոլորտի ներգործությունը պետական կառույցների նկատմամբ՝ համայնական իրավունքով նախատեսված իրենց օրինական շահերի պաշտպանության նպատակով: Հայտնի է օրինակ խոշորագույն ծխախոտ արտադրող Ռոթմանս և Ֆիլիպ Սորրիս ընկերությունների Ֆրանսիայի Պետական խորհրդի վրա ճնշման գործադրման փաստը՝ համայնական իրավաճորհների անմիջական գործողության ճանաչման նպատակով¹² կամ էլ հոլանդական առևտրային ընկերությունների նման գործողությունները՝ Հռոմի համաձայնագրերի մրցակցային դրույթների կիրառման նպատակով¹³:

Մյուս կողմից, չնայած տեղի ունեցած գործընթացների արդյունքում էապես սահմանափակվեց քաղաքական առարկությունների հնարավորությունը Դատարանի վճիռների դեմ, անդամ-պետությունները դեռևս պահպանում էին կարևոր լծակներ Դատարանի գործունեությունը վերահսկելու համար, և առաջին հերթին օրենսդրության փոփոխման և դրա միջոցով Դատարանի մանդատը սահմանափակելու հնարավորությունը:

Կարծում ենք, որ նման հնարավորություն իրագործումը գրեթե անհնար է հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, այդ թվում Դատարանի կողմից ձևավորված տեսությունների հիմնարար բնույթը, եվրոպական իրավունքի առաջնային աղբյուրների փոփոխման կարգի առանձնահատկությունները, անդամ-պետությունների տարբեր նախապատվությունները և այլն: Բացի այդ, վիճելի է նաև բոլոր պետությունների դժգոհության փաստը Դատա-

¹⁰ *Der Betrieb*, 1966, էջ 1160:

¹¹ G. Meier, "Aktuelle Fragen zur Umsatzsteuergleichsteuer", *Außenwirtschaftsdienst des Betriebs-Beraters*, №2, էջեր 75-77:

¹² J. Plötnner, "The European Court and National Courts - Doctrine and Jurisprudence: Legal Change in Its Social Context - Report on France", European University Institute: Florence, 1995, էջ 27:

¹³ M. Claes, B. de Witte, "The European Court and National Courts - Doctrine and Jurisprudence: Legal Change in Its Social Context - Report on the Netherlands", European University Institute: Florence, 1995, էջ 7:

րանի գործունեության կապակցությամբ: Փոքր պետություններին, ինչպես Բելգիային, Նիդերլանդներին և Լյուքսեմբուրգին, ձեռնառու էր ազդեցիկ դատական ատյանի առկայությունը, քանի որ յուրաքանչյուր պետություն այնտեղ ներկայացված էր մեկ ներկայացուցչով՝ փաստական հավասարության սկզբունքով: Բացի այդ գերմանիան ևս, որպես կանոն, սատարում էր Դատարանի գործունեությունը:

Ուստի բնավ համաձայն չենք գրականության մեջ նշվող այն տեսակետի հետ, համաձայն որի «դատարանի իրավասության փոփոխության հնարավորությունն ստիպում է իր ինքնուրույնության ու լեգիտիմության պահպանմամբ շահագրգռված դատարանին մնալ ընդունելի ազատության սահմաններում»¹⁴: Հակառակը, հաշվի առնելով, որ իր ինստիտուցիոնալ կարգավիճակի նկատմամբ քաղաքական ուժնեղություններն անհավանական են, այն կարող է ողջամիտ սահմաններում անտեսել կոնկրետ գործերի քաղաքական հետևանքները: Ուստի ավելի ճիշտ ենք համարում այն տեսակետը, որ պետությունները, չընդունելով Դատարանի ցուցաբերած ակտիվիզմը, համայնական մակարդակով շրջադարձ կատարել ուղղակի չեն կարողացել¹⁵: Դիպուկ է նաև համաձայնագրի փոփոխման բնորոշումը որպես «միջուկային տարբերակ չափազանց արդյունավետ, բայց դժվարիքազործելի, ուստիև անդամ-պետությունների վերահսկողության հարաբերականորեն ոչ վստահելի և արդյունավետ միջոց»¹⁶: Ամփոփելով ասվածը գալիս ենք եզրակացության, որ եվրոպական միության հիմնադիր համաձայնագրերը որպես *traités cadres* չեն նախատեսում և չեն կարող նախատեսել բոլոր հնարավոր իրավահարաբերությունների կարգավորումը, ուստի անխուսափելի է դրանց մեկնաբանությունը իշխանության մարմինների կողմից: Այլ հարց է, որ նման մեկնաբանություն տալիս Դատարանի չի սահմանափակվել միայն տվյալ իրավիճակի կարգավորմամբ, այլև մեթոդներ է մշակել պրակտիկայի ամփոփման նպատակով, այլ կերպ ասած կարծում ենք, որ այն հետապնդել է երկակի նպատակ. նախադեպային իրավունքի ձևավորում և ինտեգրման խթանում: Այդ նպատակին առաջին հերթին ծառայել է նախնական պարզաբանումների մեխանիզմը, որի միջոցով, ներպետական դատարանների հետ սերտ համագործակցության մեջ, Դատարանն ապահովել է եվրոպական իրավունքի հարկադրելիությունը՝ կայանալով որպես ծանրակշիռ դատական ատյան:

¹⁴ G. Garrett, B. Weingast, "Ideas, Interests and Institutions: Constructing the EC's Internal Market", *Ideas and Foreign Policy* ծողվածուի մեջ, խմբ. J. Goldstein, R. Keohane, Cornell University Press, Ithaca, էջ 200:

¹⁵ B. Marks, "A Model of Judicial Influence on Congressional Policy Making: *Grove City College v. Bell* (1984)", քեկնածուական (PhD) առնճախսություն, University of Washington, էջ 6:

¹⁶ M. Pollack, "Delegation, Agency and Agenda Setting in the EC", *International Organization*, №51, էջեր 118-119: